

«ՃԱՊՈՆԻԱՅԻ ՕՐ» Հայաստանի ազգային գրադարանում

Նոյեմբերի 22-ին Հայաստանի ազգային գրադարանում անցկացվեց «ՃԱՊՈՆԻԱՅԻ ՕՐ» մշակութային ծրագիրը: Այն անցկացվեց Հայաստանի ազգային գրադարանի և հայ-ճապոնական «ՀԻԿԱՐԻ» կենտրոնի հետ համատեղ: Ողջույնի և բացման խոսք ասաց Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը: Միջոցառման պատվավոր հյուրն էր Հայաստանում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Էյջի Տագուչին, ով հայերենով ողջունեց հյուրերին:

Ազգային գրադարանի կինոդիտման սրահում «Հիկարի» գիտակրթական, մշակութային կենտրոնի նախագահ Կարինե Փիլիպոսյանի նախաձեռնությամբ կազմակերպվել էր օրիգամիի և թղթարվեստի այլ տեսակների ցուցահանդես:

